Օգտագործման կանոններ

Հայաստանի Գյոթե ինստիտուտի գրադարանը անվճար հասանելի է բոլոր այցելուների համար։
Տեղում օգտվելու համար անհրաժեշտ չէ գրանցվել գրադարանում։

Գրանցում

Գրանցման համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթուղթ։
Գրադարանի ընթերցողի տոմսը անհատական է և չի կարող փոխանցվել ուրիշին։
Ձեր ստորագրությամբ Դուք ընդունում եք օգտագործման կանոնները։ Եթե փոխվում է Ձեր էլ. հասցեն կամ կորցնում եք քարտը, խնդրում ենք հնարավորինս արագ տեղեկացնել մեզ։

Տացք

Գիրք վերցնելու համար անհրաժեշտ է ընթերցողի տոմս։ Նյութերը տրվում են 2 շաբաթով և կարող են երկարաձգվել երկու անգամ՝ յուրաքանչյուր անգամ 14 օրով, եթե տվյալ նյութը չի ամրագրվել այլ ընթերցողի կողմից։

Ամրագրումներ
Դուք կարող եք նախապես ամրագրել այն նյութերը, որոնք այդ պահին արդեն ձեռքի վրա են։ Մենք Ձեզ կտեղեկացնենք, երբ դրանք կրկին հասանելի լինեն։
Դրանից հետո կունենաք մեկ շաբաթ՝ նյութերը գրադարանից վերցնելու համար։

Onleihe
Գրադարանում առկա նյութերից բացի, Դուք կարող եք անվճար օգտվել նաև թվային նյութերից։ Դրա համար անհրաժեշտ է գրանցվել հետևյալ հղումով՝ Onleihe

Գրադարանի կարգը
Գրադարանի աշխատակիցները պատասխանատու են գրադարանում կարգ ու կանոնի պահպանման համար։

Բացառում
Այն օգտատերերը, որոնք բազմիցս կխախտեն օգտագործման կանոնները, կարող են ժամանակավորապես կամ մշտապես զրկվել գրադարանից օգտվելու իրավունքից։

Վնաս և կորուստ
Վնասված կամ կորցրած մեդիաները փոխհատուցվում են ընթերցողի կողմից։ Եթե նյութը այլևս հասանելի չէ վաճառքում, գրադարանը սահմանում է փոխհատուցման գումար։